## ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2025» ՄՐՑԱՇԱՐԸ

02.06.2025 18:26

Հարգելի՛ գործընկերներ,

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը 2025թ. հունիսի 08-ին (կիրակի) ժամը 10:00-ից 14:00 կազմակերպում է «Փաստաբանների շախմատի գավաթ 2025» մրցաշար: Մրցաշարը տեղի կունենա ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 4-րդ հարկում (հասցեն՝ ք. Երևան Ջաքյան 7-2):

Շախմատի մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի և Արցախի փաստաբանների պալատի փաստաբանները, Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի աշխատակազմերի աշխատակիցները:

Մասնակցության ցանկության դեպքում անհրաժեշտ է մինչև սույն թվականի հունիսի 06-ը զանգահարել 010 600 701 հեռախոսահամարին կամ հետադարձ հաղորդագրությամբ հայտնել այդ մասին՝ նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները:

Մրցաշարում 1-ից 4-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն պատվոգրերով և մեդալներով:

*Մրցաշարի արդյունքներով լավագույն խաղացողներից կձևավորվի ՀՀ փաստաբանների պալատի շախմատի հավաքական թիմը (կամ թիմերը):*

*Հարգանքով՝*

*ՀՀ փաստաբանների պալատի*

*մարզամշակութային ակումբ*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })